## 20. ԱԼԻ ԾԱՀԻՆ

Մարթմ ուներ էրկու լաճ, մեկ աղչիկ: Ուր մեռնելու օրեր որ կմոտանա, կկանչի ուր լաճերաց կասի. - Տղեյնե՛ր, ես որ կմեռնեմ, չէլնեմ չիմանամ կարիբ-կուրբնթութեն էրթաքյ: Կարիբութեն շա՝ գյեշ պնն ի, մարթու քյուլ կանի, ես տեսեր եմ էն ինչ տնռ պրտյուճ, տյուքյ էլ մե՛քյ տիսնա: Նստեքյ ծեր տան տեղաց վերեն, ծեր արտ ափ վարեքյ, ցանեքյ, ծեր քյեոր տվեքյ իրկան, ապրեքյ ծեր խող-ճըրի վըրեն:

Մարթն մեռավ: Ընցավ քյանիմ տարի, ճեռչ լաճ, օրմ ասաց ախպերներաց. - Ախպերնե՛ր, ես չեմ տանտրե էսա երկիր, պիտի էրթնմ աշխար ֆռամ դյունյան տիսնամ, խերիքյ ի մնանք մեչ մեր բըքլեոզ տան:

Ախպերներն ասին. - Ախպե՛ր, չէ՞ որ մեր խեր մե խրատ իտու, թե մեքյ էրթն կարիբութեն, կարիբութնի խաց ճյուր մարթու չի կշտացուցե:

Ճեռչ ախպերն ասաց. - Է՜հ, տյուքյ էլ ճեռչ մարթու խնբնրն էլ պննի տեղ կտնեքյ, էն զաթի ձննձըղեր էր, չէր կիտե ինչ կասեր: Ընչի՞ ինքյ ուր ումր մեչ կարիբութնին փըճըցուց: Ես կէրթնմ՝ ինչ կէլնի, թող էլնի:

Էլնվ ուր ճամխի պատրաստութեն տեսավ, ուր պեռ բնրխանեն կապեց, հազրեց: Սորա էլավ մեկ խատ սերսուփ շուշեմ իպե, պերան կոծեց, իտիր ըռաֆ: Տառցավ ուր ախպերներաց ասաց. - Ախպերնե՛ր, քյանի էսա շուշեն սերսուփ կպսպղա, կիտցեք որ զի պնմ չէլե, եփ որ շուշեն բղտորվավ, կիտնաք, որ իմ պնն բոշ ի, խասնեքյ զի հեռքյ:

Ասաց, էլավ ինգնվ ճնմբնխ: Ծատ կննց, քիչ կննց, տեսավ տնշտիմ մեչ մեյ ճեռչ քեոշկ սարեմ. ինքն էլ շատ անութի մնացեր էր, կընննց էն տան տռնից մտավ ներս:

Էն տան մեչից խոտնի խրեղեն աղչիկըմ էրևաց, ասաց. - Է՜լ, խողածին, օցն ուր պորտով, խավքյն ուր թիվով չէր կանե գյեր ըստե, տյհու ի՞նչխ էկար: Էլի կընն, քյանի Սիվտակ դև չէկե, թե չէ՝ քյո ճեռչ կտոր ականջ կթռնի:

Մարթն ասաց. - Ես շատ անոթի եմ, տյհու զի կտորըմ խաց պե, ես ուտեմ, թող դև գյն:

- Է՜հ, քյո մուր քյո ճակատ, ես քյե կասեմ, էլի կընն: Խաց կուզես, ահա քյե խաց:

Ախչիյն խաց իպե իտեր, մարթն պրտյուճըմ առեր էր, չէր առե, դևն էկավ:

Ասաց. - Օհո՛, իմ կուրբան ուր ոտնովն իկե, - ասաց դևն:

Սորա խասավ մարթուն պռնեց ճղից. արաց էրկու կտոր. պռնեց վեր կրակին. իփեց կերավ:

Ախպերները իրիշկացին. տեսան. որ ուրենց ճեռչ ախպոր շուշեն խավարե, բըղտորվե: Ասին. - Վայլա՛. սեր ախպոր զիյնըմ խասե:

Էլան սիճնեկ ախպերն. ինգավ ճամբախ: Շատ կնաց. քիչ կնաց. խասավ էլմ էն անվերվերի տնշտի տան մոտ: Անոթցեր էր. կընաց մտավ էն տուն, էլմ էն աղջկից խաց ուզեց:

Աղչիյն ասաց. - Խողածի՛ն. էլի կընա. քյանի Սիվտակ դևն չիկե. որ էկավ. քյե կփարատի, ընցած օր ճիշտ քյե պես տղիմ պրտեց կերավ:

- Չէ՛. - ասաց տղեն. - դևն զի պան չանե, տյու զի քիչըմ խաց պե ուտեմ. շատ անոթի եմ:

Ախչիյն կնաց քիչըմ խաց իպե, իտիր տղի առճև: Տղեն պրտյունմ էրկու առեց չառեց, Սիվտակ դևն խասավ: Խասնելուն պես օրթանչի ախպորն պռնեց, ճըղեց արաց էրկու կտոր:

Ընցավ քյանիմ օր, պստիկ ախպեր տեսավ, որ ուր միճնիկ ախպերն էլ կնաց. չէկավ:

Ասաց. - Էլնեմ էրթամ իմ ախպերներաց իտև, խենքյ ի՞նչխ էլան:

Էլավ կաց պարեով արաց ուր քյուրոչ, կապեց ուր թուրն. ինգան ճնմբախ: Շատ կնաց, քիչ կնաց. խասավ էլմ էն քեոշկ սարի մոտ: Ուր խաց խըլըսեր էր, ինքն էլ շատ անոթի:

Կնաց մտավ էն տուն: Էն տեսավ, խուտնի խրեղեն ախչիկըմ էճավ տակ, էկավ, ասաց. - Է՜յ խողածին. օգն ուր պորտով. խավքն ուր թիվով էսա տեղ չէր կանե գյե. տյու ի՞նչխ էկար, էլի կնա, քյանի Սիվտակ դև չիկե. թե չէ՝ որ էկավ, քյո ճեռչ պրտյուն ակաշ կթոնի:

Լաճն իքյն ուր կմտածի. կասի՝ կա չկա, իմ ախպերներուն էսա տան մեչն են կուրիսե:

Ասաց. - Ես էլ զաթե դևու խամարն եմ իկե. թող գյա խենքյ ի՞նչ պիտի անի զի:

- Էլ քյո մուր քյո ճակատ, ես քյե կասեմ՝ էլի կնա, - ասաց աղչիյն:

Լաճն ասաց. - Զի քիչըմ խաց պե, ես ուտեմ, թող դև գյա:

Ախչիյն էլավ կնաց, քիչըմ խաց իպե իտիր տղի տեմ: Տղեն կէրավ, կշտացավ: Մեկեն դևն ներս մտավ: Տղին որ տեսավ, ասաց. - Էհե՛, իմ ավ ուր ոտնովն իկե իմ տուտ:

Արաց որ պիտի ծեռ թնլեր տղին պռներ, ճամաճ տղեն թռավ կայնավ, թուր քաշեց տյուս:

Դև որ տեսավ, ասաց. - Զա՛րկ, տղա, դնն տյՒ զարկ:

Տղեն ասաց. - Չէ՛, տյՒ զարկ, ես իմ իկե քյո ոտ:

Դև ճնղցի քարն իսկեր մեչ ուր կռոին, էօլրեց-էօլրեց, իզար տղին: Թեոզ-մնլնխուն պռնեց տուն տեղ:

Դևն ասաց. - Է՜յ խողածին, խող իր, տնռցար խող:

- Խող չեմ տնռցե, ըստե՛ն եմ, ըստե՛ն, - ասաց տղեն, թեոզերաց մեչեն թռավ տյուս: Մեյ թուր միթալ դևու վիզ թռուց:

Դևն ասաց. - Տղա՛, մեկ էլ զարկ:

- Չէ՛. - ասաց տղեն, - իմ մեր զի մեյ տիր ի պիրե:

Դև խատավ:

Էն զյախ դևու տան ախչիկ էլան էկավ. ասաց. - Տղա՛. ես քյե, տյՒ զի:

Տղեն առեց էտա աղչիկ. նստավ իպե ճեռչ փոսըմ փորեց. դև թաղեց մեչ. խողն էլ իտու վերեն, մնաց:

Քանիմ ամիս ընցավ, ուր կնիյ մեռավ:

Տղեն մնաց մենակ մեչ էտա քյոշկ-սարին:

Տղյներաց քյոր քյանիմ ամիս աչկեց. տեսավ, որ ախպերներ չէրևացին. ճար կտրավ, էլավ ինգավ ճամբախ:

Ծատ կնաց. քիչ կնաց. խասավ էտա քյոշկ սարեն, մտավ ներս, օր ցերեկ էր, մարթ-մարթաստանքյ չկեր, նստավ աչկեց չում իրիկուն. ասաց՝ հալբաթ մարթըմ կուգյա՛ էսա տեղ. բալքի իմ ախպերներաց մենեն խաբարմ առնեմ:

Իրիկուն որ էլա՛վ, ախպերն ավ անելուց ետ տարոցավ, քյոր ախպեր որ մեյմեկու տեսան. ճանչցան, ինգյան մեյմըկու վզնով, մեյմըկու պաքյիցին. ուրախցան վեր մեյմըկու:

Ախպեր քյոր էտա տեղ ժամանայմ ապրան:.

Ախպերն ասաց քյուրոչ. - Քյո՛ր. չէլնեմ, չիմանամ, էսա փոսի վերեն ճյուր լցես: Էն տեղ դևմ եմ թաղե. որ լցես դև կյարի:

Քյոր քյանիմ ամիս ճյուր պա՛ն չիլից վերեն:

Մեկ օր ինքյն ուր ասաց՝ ես պիտի ճյուր լցեմ վեր էսա փոսին, խենքյ ի՞նչ կէլնի:

Իպե քյանիմ օր ճյուր իլից վեր փոսին: Էն մեկ օրն էլ դև սաղցավ, էլավ տյուս, ասաց. - Աղչի՛կ, տյհու՝ զի, ես՝ քյոն:

Խետ մեյ մըկու նստան կայնան: Ախչիկ մնաց տղով:

Ինն ամսուց ետ ախչիկ տղեմ իպե, լաճ էր:

Ինչխ անեն խետ էսա տղին. չեն կիտե: Ախչիկ չէր ուզե թա՛լել, ամա չէր կանե խանե էրևու:

Ջա՛թի դևն իսկի չէրևա, կիշրներ կմտնի ուր մաղարի մեչ, ցերեյներ կէլներ խետ աղչկան ա՛յլամիշ կէլներ: Ախպոր վերեն իսկի այեղ չգեր, նա դեվուց, նա ուր քյուրեռչ տղից:

Քյորն ի կմտածի. կասի դևուն. - Էլի՛ էսա տղեն տար տիր վեր իմ ախպոր ճա՛մխին, էն ավից կտա՛ռնա, էսա տղեն լաճ ի, մա՛յա՛ր կառնի կուգյա՛ տուն, կառնենքյ կպախենքյ:

Դևն առեց տղեն, տարավ իտիր վեր ճամբխին: Իրիկուն ախպերն էկավ տեսավ ճա՛մխի վերեն խեղճ տղեմ անտեր-անտիրական, տըսնըխինգյ օրվան ճիժմ ինգե էնտեղ:

Առեց, իտիր վեր ծիյուն, իպե տուն:

Քյուրոչն ասաց. - Քյո՛ր, քյե տղա եմ պիրե, արի առ, խորոտ լաճմ ի:

- Ի՞նչ կասես, ախպերի՛կ, ի՞նչ տղա:

Ախպերն ասաց. - Ահա տես, վեր ճա՛մխին կընդյա՛:

Քյորն ասաց. - Առ տայ էնտեխ, զի խավաս չկա, տղա շախեմ, անփսայվել էլնեմ տղի տե՞ր. չեմ ուզե, տար:

- Տյհու ծռա՞ր, տանեմ դեռ՞ր, խո չե՞յ կուրիսե խոգիմ, մեղքյ չի՞: Գյետ պախենքյ, շախենքյ, անենքյ մե տղա, աստծու տված՝ մարթ կյա՛քյով չանի՞:

Քյոր ծեն կտրեց: Տղին առեց, շոր մոր կարեց, շախեց պախեց. անուն էլ տրին Ալի-Ծահի:

Ալի-Ծահին ճեռճա՛ցավ շուտըմ, խելավորվավ, ցերեկներ ուր խեր կտիսներ,

կիշըրներ՝ քեռին: Օրըմ խարցուց ուր մոր. - Մարե՛, ընչի՞ օր քեռին գյա տուն. աղեն կէրթմ տյհւս:

Մեր ծեն չի խան:

Առատուն էլավ դևին ասաց Ալի-Ծահու խմբարն:

Դևն ասաց. - Էլնենք Ալի-Ծահուն էօրեոխկենքյ էրթմ ճրին. խենքյ ի՞նչ կմտածենքյ:

Կասեն. - Ալի-Ծահի. էլի՛ էսա փարչ տար ճյուր պե:

Ալի-Ծահին կէլնի փմրչ կառնի, կկայնի տոան վերեն, ականջ կանի:

Կլսի, որ խեր-մեր կասեն՝ պիտի սպանենքյ քեռուն:

Դև կասի. - Ես կէլնեմ սև օցըմ կքմշվեմ տոան գյլեոխ, եփ ախպերտ էկավ, կզմնեմ ինոր կսպանեմ:

Ալի-Ծահին որ լսավ, շոտըմ կնմց ճյուր իպե, իտուր մորն, ասաց. - Մարե՛, մարե՛, իմ քյեռին դեո՞ր ի կնմցե ավ, ես էլ կուզեմ էրթմլ:

Մերն ասաց. - Տյհւ ծոմ՞ր, տղա, քյեռիտ ընչի՞ էսա կտոր գյմխ ինգմվ միտդ:

Ալի-Ծահին շատ զոռեց, մոր մոտեն քյեռու տեղ խասկցավ, էլմվ կնաց կըն-դավ. ինոր խետ էկավ տուն:

Տան որ մոտացավ՝ Ալի-Ծահին ասաց. - Քեռի՛, քեռի՛, զի պիտի առնես թիվի գյլխու վերեն, նոր մտնես ներս:

Քյեռին ասաց. - Ընչի՞, Ալի-Ծահի, քյե ի՞նչ էլմվ, ընչի՞ առնեմ վեր թիվիս, նեղացա՞ր:

Ալի-Ծահին ասաց. - Ձեմ կիտե, զի պիտի առնես վեր քյո թիվին:

Քյեռու ճար կտրավ, Ալի-Ծահին առեց վեր ուր թիվին, տարավ տուն:

Դև տոան վիրից որ տեսավ Ալի-Ծահին վեր քյեռու թիվին ի, չկարցավ զմներ, որ զաներ Ալի-Ծահին կմեռներ:

Էն օր ընցավ, էն մեկէլ օր դևն ասաց. - Ալի՛-Ծահի, էլի կնմ ճյուր պե:

Ալի-Ծահին առեց փմրչ, էլմվ տոան իտև պահ իտիր, ականջ արաց, լսմվ, որ դևն ասաց ուր մոր, թե՝ ես կէլնեմ սև օց, կքմշվեմ տոան շեմի տակ, ախպերտ որ գյմ. կզմնեմ կսպանեմ:

Ալի-Ծահին վմզե-վմզ կնմց ճյուր իպե: Իտուր մորն, ասաց. - Մարե՛, մարե՛, իմ քյեռու տեղ որտե՞ղն ի, զիկ ասա:

Մերն ախպոր տեղն ասաց:

Ալի-Ծահին էլմվ կնմց մոտ ուր քյեռին, ինոր խետ մեյդըրմ էկավ տուն, որ տուն մոտացան, ասաց. - Քյեռի՛, էրեկ տյհւ զի շլկըցիր, էսօր էլ ես քյե պիտի շըլկեմ:

Ասաց քյեռին. - Ալի-Ծահի, տյհւ թսմ տղեկութեն կանես, ի՞նչխ կանաս զի շըլկե:

Ալի-Ծահին ասաց. - Ձէ՛, չէնե, ես քյե պիտի շըլկեմ:

Քյեռին ինչ ասաց, չկարցավ Ալի-Ծահու ծեռնից ազատվեր:

Ալի-Ծահին ոտկեր տըփեց գետին, իլմց, աղմչանքյ ինգմվ, ուր խոսկ տարավ մոմն: Առեց քյեռուն ուր շըլմկ, տոան շեմքն ընցուց, նոր իտիր գյետին:

Դևն էնօրն էլ չկարցավ պմմ անեը:

Էն մեկէլ օր ասաց. - Ալի-Ծահի, էլի կնմ ճյուր պե:

Ալի-Ծահին խասկցավ ի՞նչ էր, առեց փմրչն, էլմվ կայնավ տոտ: Էնտեղ լսեց,որ դևն ասաց ուր մոր. - Ես կէլնեմ սև ամբ, կէրթմմ ախպորտ գլխու վերեն, քյարե կարկուտ կզմնեմ, տմշտի մեչ կսպանեմ:

Ալի-Ծաճին շոտըմ կընաց ջյուր իպե. քյեռու տեղն խասկցավ մոր մոտեն. էլա՛վ վազեց տաշտ:

Ջուր խասավ էնտեղ, տեսավ սև ամպ գեռ իկե վեր քյեռու գլխու կայնե. ճա-ճա քանիմ խատ էլ կարկուտ իզւրկ:

Խասավ մո քյեռին, ասաց. - Քյեռի՛. քյեռի՛, արե մտի իմ սաքյոլի տակ:

Ուր սաքյոն իխան իթա՛լ վեր քյեռուն. էլ կարկուտ չի գա՛ր: Սև ամպ ցըվըրվավ կնա՛ց:

Էնմեկէլ օր դևն էլմ ասաց. - Ալի-Ծաճի՛, էլի էսա փա՛րչ տար ջրյհ:

Էլա՛վ Ալի-Ծաճին փա՛րչն առեց. կայնավ տռան իտև:

Դևն ուր մորն ասաց. - Կնի՛Կ. էսօր էլի չոր խացեր շար կողրայճտ պառկի վերեն. ախպերտ որ կուգյա՛. շոջվի ըստեխ. շոջվի էնտեխ. թող կոտոտվի կողրայճտ, որ ախպերտ կխարցուցի՝ ի՞նչ էլե քյե. ասա՝ ես խիվանդ եմ. կնա՛՝ սև կըռկան գյըլեոխ իննա՛ն կանաչ մատոտի գյըլեոխ պե. ես ուտեմ, որ ժըրեմ: Կանես կեր. կուտաս ինոր ուտի:

Ալի-Ծաճին իթող կնա՛ց ջրյհ:

Իրիկուն քյեռին էկավ տուն, տեսավ. որ քյոր պառկե. կշոջվի ըստեխ՝ կողրայճ կխըռխըռա, կշոջվի ինտեխ՝ կողրայճ կխըռխըռա:

Ախպեր խարցուց, ասաց. - Քյո՛ր, քյե ի՞նչ էլի:

Քյորն ասաց. - Ա՛խ, ախպեր. խիվանդ եմ, պիտի էրթաս զի մեյ խատ սև կըռկան գյըլեոխ, մեյ խատ էլ կանաչ մատոտի գյըլեոխ պիրես. ես կանեմ զի դա՛րման կուտեմ:

Առատուն քյեռին որ էլա՛վ պիտի էրթեր, Ալի-Ծաճին էլ էլա՛վ ինգավ ինոր խետ: Տա՛շտ որ խասան՝ քյեռին բուշլայեց սև կռիկ զա՛նել, Ալի-Ծաճին կւռներ կտներ մեչ ուր չա՛նթկին: Քիշըմ որ կէրթին՝ Ալի-Ծաճին կխաներ կըռկըռներաց գյըլխըներ կքյա՛շեր. թա՛լեր:

Քյեռին որ տեսավ. խասավ Ալի-Ծաճու ծեռնից տոպրայն առեց, նոր սև կըռիկըմ իզա՛ր, իտիր մեչ, մեյ խատ էլ կանաչ մատոտ խատուց, էն էլ իտիր տոպրակ, առեց էկավ տուն:

Ասաց քյուրեոչ. - Առ քյո ուզածներ. պիրի:

Քյորն առեց. իտիր էնտեխ:

Առատուն քյեռին կընւցց ավի. Ալի-Ծաճին մնաց մոտ ուր մեր:

Դևն ասաց. - Ալի-Ծաճի. էլի փա՛րչն առ կնա՛ ջրյհ:

Ալի-Ծաճին առեց փա՛րչն, էլա՛վ տյուս, տռան իտև կայնավ: Լսեց, որ դևն ուր մոր կասի. - Պե՛, էտա գյլխուց, էտա կանաչ մատոտից կեր իփի, տիր ախպորտ դեմ: Ճյուր էլ իսկի մի թոնե էն տեղ: Էն գյա՛խ, որ էն ուտի, կծարվընա, կբոռա՝ յամա՛ն, ես պատռա: Խետ էն ըսկուն բոռաց. ես կէլնեմ տյուս. կսպանեմ ինոր:

Քյորն իփեց կեր, իրիկուն իտիր ախպոր դեմ:

Տէլ ա՛լա պրւոյուճ չէր տվե ինե Ալի-Ծաճին էլավ տյհւս, տառցավ վա՛զե-վա՛զ էկավ ներս, ասաց. - Յամա՛ն, էլեյճ տեսեք, մեր քյաղաքյ կվառվի. յանկուն ինգյի:

Քյոր վ՛ախպեր թոռուն տյհւս, որ յանկուն թամաշա անեն, ճաման Ալի-Ծաճին ուր մոր թեռփսին իտեր քյեռու դեմ, քյեռուն իտիր մոր տեմ:

Քյոր վ՛ախպեր տւառցան էկան ներս, նստան խացի: Քյոր քյանիմ պրտյուճ առեց չառեց, բոռա՛ց. - Յամա՛ն, ես պատռա:

Խետ բոռաց՝ ես պատռա, դևն ուր մաղարից էլա՛վ տյուս: Տեսա՛վ որ ի՞նչ. ուր կնիկ ինգե էնտեղ, կմեռնի, ախպեր՝ սա՛ղ, սելիմ տա՛ն նստուկ ի:

Դև գյեռն իտու, գյեռն առեց, տեղընցավ էլավ պտուղ ըմ խունկյ. լեղին էլավ կորեկ:

Պիտի փախներ. Ալի-Ծաճին թռավ տեմ, պռնեց. ասաց. - Արե՛. նստի ըստեղ:

Դևուն նստցուց, տառցավ մեկիկ-մեկիկ ուր քյեռուն պատմեց դևու. ուր քյուրեոչ արածներ. օց էլնել. կարկուտ էլնել. սև կըռկան, կանաչ մատոտի գլըլեոխ:

Էն գյախ էլան էրկսով դևն սպանեցին, էլան էնտեղից ինգյուն ճամբախ. կնացին օտար երկիր:

Ծատ կնացին. թե՝ օյիչ. կիշեր որ մոտացավ. ծառիմ տակ նստան:

Քյեռին ասաց. - Ալի-Ծաճի. էլի էսա փանար վառի. ամա՛, մույաթ կաց, խետկներս մեյ խատ շամալի ի մնացի. չէլնի ընցնի:

Ալի-Ծաճին էլավ ճրայճ կպուց. կախեց ծառից. ինքյ պառկավ քընավ, քյեռին մնաց արթյուն: Կես կիշըրի մոտ էր. մեկ էլ էն տեսավ. ծառի վիրվից խավքըմ ջըրընդի պես էճավ, պիտի ճրայճն ընցուցեր: Քյեռին թռավ վեր, քյաշեց ուր թուր, խավքյուն լարեց:

Կես կիշըրից ետ, քյեռին Ալի-Ծաճուն ակըխցուց, ասաց. - Էլի՛ քիչըմ գյախ էլ տյու աչկի. գյեռ կլյուսնա: Աման մույեմաթ կաց, խավքյըմ կա. կու գյա մեր ճրայճ կնցուցի. չթոնես:

Քյեռին քյնավ. Ալի-Ծաճին նստավ կաչկի: Է՜ճ, տղի ւաչկեղն ի՞նչ պիտի էլնի: Քյուն կոխեց, աչկեր կոծվավ. ճաման էտա կտոր գյանխն էր, խավքն էճավ իզար ճրայճն ընցուց. թռավ կնաց:

Ալի-Ծաճին ակխավ, տեսավ, որ ճրայճն ընցեր ի: Էլավ առեց փանար, պանցըրցավ տառի գյըլեոխ, տիսնա խենքյ լեռս-մեռս չէրևա:

Տեսավ. որ զատ տեղըմ պեոցըմ կէրևա: Առեց ուր ճրայճն, էկավ էնտեղ: Խասավ էնտեղ. տեսավ քյառսղըն դև քներ են, քյառսուն կսւնթե պղինձըմ տրեր են վեր կրակին, կեռա:

Ուր ճրայճն կպուց, էկավ: Խասավ կես ճամբախն, ասաց. - Եա՛, ես ընչի էն դևերաց պառև չտվի:

Ծրսւյճն ընցուց, էլըմ կնաց էնտեղ:

Դևերացն ասաց. - Պարեով ծե:

Դևերն ասին. - Աստծու պարին:

Ալի-Ծաճին ուր փանար վառեց. ետ տառցավ, խասավ կես ճամբախն, ասաց. - Ցա՛, ես ընչի՞ չխարցուցի. թե էտա ի՞նչ ի կեռուցեքյ:

Ետ տառցավ, ճրայճ փչեց, կընաց ինոնց մոտ, խարցուց. - Էտա ի՞նչ ի կեռուցեքյ:

Ասին. - Էսա քյաղքյի թակավրու ախչիկ կուզենքյ պռնել անել խարիսա: Աման ի՞նչ կանենքյ՝ չեյճ կանա մտնի ներս:

Ալի-Ծաճին մոտեցավ քյաղքյի բանդընին, վիրանց ցածրանց իրիշկաց. ուրռնեց, ասաց. - Ձի քյառսուն խատ էրկըթե ցից պերեքյ:

Դևեր էլան ուրենց օճխի աներոցներ, էրկըթե ցցեր տվին Ալի-Ծաճուն:

Ալի-Ծաճին առեց ցիցեր, ուր ծեռնով կոտըռտեց: Արաց քյառսուն խատ ցից. տառցավ մեյ-մեկ իզար բանդան. պանցրավ վեր, չում խասավ բանդնի գյըլեոխ:

Սորա կանչեց դևերաց, ասաց. - Ախպերնե՛ր, էլեյճ տյկուք էլ եկեքյ:

Դևեր որ պանցրցան, Ալի-Ծաճին մեյ-մեկ պըռնեց՝ վզկներ կտրեց, իթալ բանդնի էն իրեւ:

Իտին տըրին, էրկու գյըլխեն դևն պռնեց, ինորն էլ տիկ խանեց. իտիր վեր

բաղնին: Սորա էճավ տակ. կնաց թակավորու տուն. մտավ ներս, թակավորու ախչկա իրեն քյնուկ տեղ պաքեց, մատնիյն էլ փոխեց. տսուցավ էկավ ֆանար կպուց. էկավ մոտ ուր քյեռին:

Առատուն թակավորն էլավ վեր, տեսավ. որ ուր էօւփ պատի տակ քյառսուն խատ դևու ջանդակ լցեր են. մեկուն էլ տիյն են խանե:

Էլավ ուր մարթերն խանեց տյուս, փնտռելու, թե էսա վո՞վ արե, վո՞վ չարե, կնղընեն:

Մարթերն ինգան սւր-քյար, ռաստ էկածին պռնիցին, պիրիցին մո թակավոր:

Թակավոր ինոնց հիսենին ցիցեր քյաշել կուտեր, իսկի մեյն էլ չկարցավ:

Էն կտոր գյախ Ալի-Շահին, ուր քյեռին էկան էնղեխեն, կէրթին:

Թակավորու մարթեր կնացին ինոնց էլ առին պիրին մո թակավոր: Թակավոր քյեռուն ասաց. - Մեյ խատ էսա բաղնի ցցերաց մեյն իրար տու:

Քյեռին ձեռ իտու. իրար իտու ցից: Ցից զեռռեով լեյաց տեղեն: Սորա Ալի-Շահուն ասաց. - Իրար տու:

Ալի-Շահին ծեռ տալու պես, ցիցն էկավ տյուս:

Թակավորն ասաց. - Տյու ես իմ փնտռած մարթ: Իմ ախչիկ քյե լայեղ ի:

Ալի-Շահին ասաց. - Ես քյո ախչկան պետք չունեմ: Քյո ախչիյ տու իմ քյեռուն:

Քյեռու խարսնիս էնտեղն արին պռծան: Ալի-Շահին առեց ամքեմ ուսկի, մեյ խատ խրեղեն ծիմ թակավորու փայլսից քաշեց տյուս, խեծավ, կաց պարեվ արաց քյեռուն, ասաց. - Իմ աստղն ֆիլան աստղն ի, քյանի պռծառ է, պան չկա. որ խավարավ՝ խասնես զի իմդադ:

Ալի-Շահին շատ կնաց, թե քյիչ, տեսավ մարթըմ, աչկ տրե գյետնի ճեռչ ծակիմ վերեն, կիրիշկա գյետնի ցաձր:

Ալի-Շահին ասաց. - Ախպե՛ր, էն ի՞նչ ի կանես:

Մարթն ասաց. - Ըստյուց կիրիշկամ, չում ջահնամ մեյ կտիսնամ:

Ջի կասեն շահնամու ծառն իրիշկացող:

Ալի-Շահին ասաց. - Վալլա՛, էտ էլ աղեյ պամ էր: Չե՞ս իգյա էլնե զիկ ախպեր:

Ջայհնամու ծառն իրիշկացողն ասաց. - Կնա էնտեխ, ես քե պես մարթուն ախպեր չեմ էլնե, էս Ալի-Շահու պես մարթուն ախպեր կէլնեմ, որ քյաստսուն դևերն սպանեց:

Ալի-Շահին ասաց. - Ալի-Շահին ես եմ:

Ջահնամու ծառն իրիշկացողն ասաց. - Որ տյէ ես Ալի-Շահին, կէլնեմ քյե ախպեր:

- Է՛, - ասաց Ալի-Շահին, - ես կէրթամ աշխար կան գալ, իմ աստղն ֆիլան աստղն ի, թե որ խավարավ, խասեքյ զի փրթուցեքյ:

Ջահնամու ծառն իրիշկացողն ասաց. - Շատ աղեկ, համա տյէ կնա, մի վախենա:

Շատ կնաց, թե քիչ, տեսավ մեկ ուրիշ մարթըմ աստղեր կիրիշկա:

- Պարև քյե, ախպեր, - ասաց Ալի-Շահին:

Մարթն ասաց. - Ասսու պարին: Պարեով էկար:

Ալի-Շահին ասաց. - Ախպե՛ր, ընչի՞ կիրիշկաս էրկինք:

Մարթն ասաց. - Ես աստղեր կկարդամ կիմնամ, թե վո՞վ կմեռնի, վո՞վ սաղ կմնա:

- Էտ էլ աղեկ պան էր, - ասաց Ալի-Շահին, - չե՞ս էլնե զի ախպեր:

Մարթն ասաց. - Ես Ալի-Շահուն ախպեր կէլնեմ:

Ալի-Ծահին ասաց. - Ալի-Ծահին գյետ ես եմ:

- Որ տյհու ես՝ կէլնեմ:

Ալի-Ծահին ասաց. - Ես կէրթա̈մ, իմ աստղն փիլան աստղն ի, որ խավարավ. արե զի յեռք:

Ալի-Ծահին ինգա̈վ ճա̈մբա̈խ, կնա̈ց, կնա̈ց, խասավ ծովա̈փ. էն տեղ մեյ ճեռչ քյոշկ սարիմ մեչ մտավ: Էսա էօղեն իրիշկաց՝ մարթ չտեսավ, էնա էօղեն իրիշկաց՝ մարթ չտեսավ: Կնա̈ց էն մեկ էօղեն էլ տեսավ. որ սեղան տրուկ, խաց պա̈րին վերեն հա̈զր: Նստավ աչկեց, աչկեց, մարթ մարթասայհ չէրևաց: Ծատ էր անոթացե, էլա̈վ ուր խաց կերավ, պառկավ քյնավ:

Էն մեկէլ օր էլա̈վ առեց ուր նետվանեղ, խեծավ ուր խրեղեն ծին, ինգա̈վ սար. քյար՝ ավի: Իրիկուն, որ տա̈ռցավ, տեսավ, որ էլմ ուր կեր կերակուր հազըր. էն տեղ տրուկ, ամա մարթ-խասն չկա:

Քյանիմ օր հա կնա̈ց սար. էկավ խաց կերավ. կնա̈ց սար. էկավ խաց կերավ, էն մեկ օրն էլ ասաց՝ էսա չէլա̈վ, ես պիտի էսա մարթ վո՞վ ի, որ կեր կիփե, տիսնամ:

Կնա̈ց մտավ տուն պախկըվավ. տոան իտև, պահ իտիր:

Տեսավ, որ ծովուց խուռնի խրեղեն ախչիկըմ էլա̈վ տյուս, էկավ մտավ էն տան մեչ:

Ալի-Ծահին համան խասավ ուր պախկըված տեղեն էլա̈վ տյհուս, ախչկան պռնեց, ասաց. - Ախչի՛կ, տյհու վո՞վ ես:

Ախչիյն ասաց. - Ալի-Ծահի, տյհի՝ զի, ես՝ քյե, ապրենքյ մեչ էսա տան, էսա տուն իմն ի, ի՞նչ ասես կա, չում մեր մախն ուտենքյ չխըլսնե:

Ալի-Ծահին ինա̈ն ախչիկ մեյմըկու առին, ապրան էնտեն:

Քյանիմ տարի ընցավ, օրըմ ջուխտըմ դա̈վրեշ էկան էտա տա̈րբըրներաց կընցընին. քյնելու տեղ չկեր, Ալու-Ծահու տուն որ տեսան, էկան էն տեն: Տուռ թփիցին, Ալի-Ծահին կնաց տոռ իպաց:

Դա̈վրեշներ պա̈րեով տվին, ասին. - Մուսա̈ֆիր կուզե՞ք:

Ալի-Ծահին ասաց. - Մուսա̈ֆիրն աստծուն ի, պա̈րեով խա̈զա̈ր պա̈րեով:

Առեց իպե ներս, ուր կնգա̈ն կանչեց, ասաց. - Կնի՛կ, խաց-մաց պատրաստի, մուսա̈ֆիր կա:

Դա̈վրեշներն էկան ներս, նստան զրեցց սարից-ծերից, խարց-փորց, չում Ալի-Ծահու կնիկ խաց հա̈զրեց, իպե ներս:

Դա̈վրեշներ որ տեսան ախչիկ, պերիյհտներ մնաց պա̈ց:

Խաց-մաց կերան, էլան ինկա̈ն ճա̈մբա̈խ, կնա̈ցին ուրենց երկիր: Ուրենց երկրի թակավրու լաճն էլ ճեռճա̈ցեր, թակավոր խարս կփնտռեր:

Դա̈վրեշներ կնա̈ցին թակավորուն ասին. - Թակավոր ապրած, էսա ծովու էն մեկէլ իրես Ալի-Ծահի անունով մարթըմ կա, կապրի մենակ, ուր կնգա̈ն խետ, մեչ ուր քյոշկ սարին: Ամա՛, կնիկ մասե խուռնի խրեղեն ախչիյմ ի: Մենայ թե Ալու-Ծահուց զոռով պա̈ն պիրել չէլնե, կանաս փա̈նդով պե:

Թակավորն էլավ դա̈լա̈լ իտու կանչել ուր քյաղքյին մեչ թե վո՞վ կա ըսկուն մարթ յա կնիկ, որ կանա խելքով, փա̈նդով Ալի-Ծահու կնիյ պիրի զի:

Պառավմ էկավ ասաց. - Թակավոր ապրած, ես կէրթա̈մ:

Էլա̈վ խեծավ ծծյում, սև օցն ափաց խա̈րազա̈ն, ինգա̈վ վեր ծովուն «եկե-դյուկե, եկե-դյուկե» անելով կնա̈ց ծովու էն մեկէլ իրիսանց էլավ տյհուս: Ուր ծծյում պախեց ծովու ա̈փ, իյհն էլա̈վ կնա̈ց Ալի-Ծահու տոռ թըփեց:

Ծովեղեն ախչիյն էլավ փենջարից իրիշկաց, տեսավ անտես-անճանաչ պառավըմ:

Ասաց. - Վո՞վ ես, ի՞նչ կուզես:

Պառավ ասաց. - Խեղճ պառավմ եմ, արե տուտ պաց, էսա կիշեր մնամ ծեր տուն:

Ծովեղեն ախչիկն ասաց. - Որտեղեն իկեր ես, էլմ էն տեն կնա: Վեր քյե տուտ չեմ պանա:

Պառավն ի՞նչ կանդար, որ աղուշանքյ ինգավ, ծովի ախչիկ տուտ չիպաց:

Պառավ քաշվավ կնաց մտավ տռան քյեռշեն, նստավ:

Իրիկուն Ալի-Շահին էկավ տուն, տեսավ պառավըմ կայնե տռան կուշտ, ասաց. - Պառավ, ի՞նչ կուզես:

Պառավն ասաց. - Քյո բաժին մեռնեմ, մեկ էսա կիշրվան տեղ կուզեմ, քյո կնիկ տուտ չպանա:

Ծովի ախչիկ գյըլեոխն իխան տյուս, ասաց. - Ալի-Շահի՛, իտա պառավն մի պիրե ներս, զարար կքյաշես:

Ալի-Շահին ասաց. - Կնի՛կ, տյու ծռա՞ր, էսա խեղճ պառվուց ի՞նչ տյուս կուգյա: Տուտ պաց, թո գյա ներս:

Կնգան ճար կտրավ, էճավ տակ, տուտն իպաց, Ալի-Շահուն ինան պառվուն առեց ներս:

Պառավն էր, խետ կնաց ներս, բաշլայեց խորթ վ ավել՝ տախտ, տուն, պան, տուռ:

Ալի-Շահին ասաց. - Կնի՛կ, տիսնաս ի՞նչ աղեկ ի, մեր տան պան գյեործ ի՞նչխ անասել կանի: Թո մնա մեր տուն, չէրթա:

Շաբաթըմ էրկու, ամիսմ իրեք, որ ընցավ, պառավն խորո՛տ-խորո՛տ մտավ կնգա աչկ:

Էն մեկ օր ասաց. - Ախչի՛կ, տյու կիտե՞ս Ալի-Շահու վոժ-կուվաթ, խոգյին ո՞ր տեղն ի:

Ախչիկն ասաց. - Չէ՛, չեմ կիտե:

Պառավն ասաց. - Տնաշենի ախչի՛կ, ի՞նչխ իրեզ կնիկ եք, որ ըսկընեմ օր քյե չասե էտա պաներ, զայներ քյե չուզե, որ ուզեր՝ քյե կասեր:

Ախչկա սրտի մեջ կրակն ինգավ: Էլ խանգյիստ մնալ չկա, չկիտե իրիկուն եփ կուգյա, որ Ալի-Շահին գյա տուն, խարցուցի:

Իրիկուն Ալի-Շահին էկավ տուն: Ծովային ախչիկ կնաց տեմ, թևն իթալ վեր թիվին, առեց իպե ներս: Կիշեր որ պառկան, խարցուց. - Աղորթ, Ալի-Շահի, քյո վոժ-կուվաթ, քո խոգյին ո՞ր տեղն ի, օր զի չես ասե:

Ալի-Շահին ասաց. - Ընչի՞ կխարցուցես:

Ախչիյն ասաց. - Չէ՛, որ զի կուզես՝ պիտի ասես:

Ալի-Շահին ասաց. - Իմ թուր, որ քյաշեն տյուս թալեն մեջ ծովուն, չում քյառասուն օր, ես անակախ, անիշար կիյնեմ, քյառասուն ավուր ետ կմեռնեմ:

Ծովի ախչիյն առատուն էսա խաբըրներ ժողվեց փեշ, էլավ կնաց պառվուն ասաց: Ասաց. - Թե Ալի-Շահու վոժ, խոգյին մեջ ինոր թըրին ի, որ քյաշեն, թալեն մեջ ճրին, չում քյառասուն օր կինի անիշար, ինօրից ետ՝ կմեռնի:

Պառավն մեջ ուր մտկին ասաց. - Քյո ումուտ խորիցի: Ի՞նչխ խասկըցա ճըմեն պան, վաղ ես անուշ կենամ:

Էն մէկէլ օր պառավն ծովի ախչկան ասաց. - Ախչի՛. էլի էրթանքյ ծովափ լվաց անենքյ:

Էլյա̈ն շորեր ժողվիցին, կընուցին, խասան ծովափ. պառավն ասաց. - Ախչի՛կ. սապոն մոռցա. էրթամ պիրեմ:

Կնա̈ց տուն. Ալի-Ծահին քյներ էր. ուշիկըմ թուր ամնից քյաշեց. տարավ իթա̈լ ծովու մեչ: Թուր կնաց խըշթըլվավ սիվտայ դևու ոտաց մեչ:

Ալի-Ծահին ինգա̈վ անիշար. էլ մարթ՝ կա. խոգյի՝ չկա:

Պառավ ետ տա̈րցավ, էկավ մոտ ծովու ախչիկ: Ասաց. - Ախչի՛. արե էրթանքյ էնա տեղ, ծովա̈փ չեմ կիտե ի՞նչ ի կապեր են:

Կառնի ախչիյ. կէրթա̈ ծովա̈փ: Էնտեղ ուր ծծյում նշանց կուտա, կասի. - Էսա ծծյում վո՞վ ի պիրե էստեղ:

Կասի. կէրթա̈ կիրիշկա ծծմի մեչ: Տա̈ռնու կասի. - Քա̈՛, սև կապեմ, էսա ի՞նչ է մեչ. ոսկի՞ ի. արծա՞թ ի, ի՞նչ ի: Իմ աչկ չճեռկի, մե խատ տյհւ արե իրիշկա խենքյ:

Ախչիյն էկավ, արաց. որ կըզվեր իրիշկեր, պառավ ախչկա ոտկեր պռնեց, յալլա՛ կլորեց մեչ ծծմին: Խեծավ վերեն, սև օց պռնեց ծեռ, «եկե-դյուկե, եկե-դյուկե» անելով, խասավ ուր թակավրու քյաղաքյն, էլավ տյուս: Տարավ ախչիյն իտուր թակավրուն: Թակավոր խարսնսի պատրաստութեն տեսավ:

Մենքյ խաբար տանք Ալի-Ծահու քյեռուց, ախպերներաց մենեն:

Քյեռին իրիշկաց աստղ, տեսավ. որ Ալի-Ծահու աստղ խավարե, էլա̈վ ինգա̈վ ճա̈մբա̈խ:

Ծատ էկավ. քիչ էկավ, էկավ խասավ Ջա̈հնա̈մոց ծար իրիշկացողի մոտ: Ասաց. - Ախպե՛ր, տյհւ Ալի-Ծահին տեսե՞ր ես, ըստեղից ընցե՞ր ի:

Ասաց. - Իմ ախպե՞ր Ալի-Ծահին:

Ասաց. - Էլեր եք ախպե՞ր:

Ասաց. - Խա՛, էլեր ենքյ ախպեր, էփեյի ժամանակ ի ինոր ըստեղից ընցնել, ի՞նչ կա:

Ասաց. - Ինոր աստղ խավարեր ի: Ցան խասնենքյ, յան չխասնենքյ:

Էլա̈ն էրկուս մեյտըրա ինգւա̈ն ճա̈մբա̈խ, էկան խասան թուղթ իրիշկացող. աստղ իրիշկացող մարթու մոտ:

Ասին. - Պա̈րեով քյե, ախպե՛ր:

Ասաց. - Աստու պա̈րին:

Ասին. - Ալի-Ծահին ըստեղից ընցե՞ր ի:

Ասաց. - Ի՞մ ախպեր:

Ասին. - Էլեր եք ախպե՞ր:

Ասաց. - Խա՛, էլեր ենքյ ախպեր: Ալի-Ծահին ընտեղից ընցավ, կէլնի տարիմ, ի՞նչ կա:

Քեռին ասաց. - Ինոր աստղ խավարե, յա՛ն խասնենքյ, յա՛ն չխասնենքյ:

Թուղթ իրիշկացող, ուր թուղթն իրիշկաց, Ալի-Ծահու տեղն խասկցավ, էլան իրեյհ մեյ տեղ կնա̈ցին էն տեղ: Մտան ներս. տեսան Ալի-Ծահին հա՛, հա՛ ի կմեռնի, զեռրեով նա̈ֆա̈ս կտրփա:

Թուղթ իրիշկացող թուղթն իրիշկաց, ասաց. - Ալի-Ծահու թուրն մեչ ծովուն ի:

Ջա̈հնամու ծարն իրիշկացողն էլա̈վ վեր ծովուն, սկավ տակ, տեսավ, որ թուրն կնա̈ցե, խըշթըլվե սիվտայ դևու ոտաց մեչ:

Ետ տա̈ռցավ էկավ, խինգյ վեց բա̈րդա̈ն պա̈մբա̈կ առեց կնա̈ց, էճա̈վ ծովու տակ, թուրն որ դևու ոտնից քյա̈շեց, դևն ինգա̈վ իտիվեն, ուր ցավից կուզեր սպանել

Ջահնամու ծարն իրիշկւցողին: Ջահնամու ծարն իրիշկացող իթող բնրդըհտեր մեյմըկու իտիվեն չուր ազնտվավ. առեց թուրն էկավ. թուրն տրեցին , հւսման Ալի-Ծահու խոզյին էկավ փոր:

Ալի-Ծահին ակխավ, ասաց. - Օ՜ֆ. ընչի՞ զի ակխցուցիքյ. անուշ ի քյնե:

Քեռին ասաց. - Անուշ քյում էր: Վալլա՛, խոսկ վեր չէր ուզե. քիչմ էլ չխասնինքյ. մեռիր իր:

Սորա կպատմեն ինոր գյլխի էկած պաներ:

Կէլնեն չորսով մեյղըրն կինեն ճամբնխ: Ծատ կէրթնն, թե քյիչ, կխասնեն էն թակավորու քյաղաքյ: Կէճնեն մեյ խեղճ պառվում տուն:

Պառվուց կխարցուցին. - Պառա՛վ, էսա ի՞նչ նաղարի. զուռնի ծեն ծենոց ի:

Պառավն ասաց. - Թակավորու լաճ կփսակեն. ինոր խարսնիսն ի:

Քյեռին խարցուց. - Խա՞րսն ո՛ր տեղից ի:

Ասաց. - Խարսն Ալի-Ծահու կնիյն էր: Մեր քյաղքյի ջադի պառավ կննց մտուց ծծյում, առեց իպե: Էն էլ մըկա ախչիյն զեհիր պռնե ծեռ, կասի՝ չե՛մ առնե, որ չե՛մ առնե, զի կսպանեմ, չե՛մ առնե:

Քյեռին էլավ կննց էօխկեմ խնձեոր առեց, իպե իտուր պառվուն: Իխսն Ալի-Ծահու մատնիյն էլ իտուր պառվուն, ասաց. - Պառա՛վ, տյիւ քյո կաթ, թե կարցար ծովու ախչիյն պիրես, քյե ի՞նչ ասես կուտամ: Էտա տղեն Ալի-Ծահին ի:

Պառավն առեց խնձեոր, իլից մեչ թաքախիմ, մեյ խնձորն էլ կտրեց, մատնիյն իտիր մեչ, կնաց մոտ ախչիկ:

Ախչիկ որ պառվուն տեսավ, ասաց. - Պառա՛վ, մի մոտենա, ծեր քյեռքյը կտրի, քյե պես մեյ ջնղիմ էր, որ զի Ալի-Ծահուց փախցուց իպե:

Պառավն առեց իրիսի խնձեոր, իթնլ ծովու ախչըկան, ասաց. - Ալի-Ծահու քնսնր, որ կսիրես, առ կտրե կե:

Ախչիյն առեց խնձեոր կտրեց, մատնիյ մեչեն ինգնվ. առեց իրիշկաց, տեսավ Ալի-Ծահու մատնիյն ի:

Ասաց. - Պառա՛վ. իսոր տերն ո՞րտեղն ի:

Ասաց. - Ալի-Ծահին ուր քյեռու. իննն էրկու ախպերներաց խետ գյեօ մեր տուն:

Ծովու ախչիյն ասաց. - Աղե՛կ. կնն Ալի-Ծահուն ասա, վնղ իրիկուն որ արև կմտնի, թող խեծնի ուր խրեղեն ծին, գյն իմ փենջնրի տակ:

Պառավ ետ տնրցավ կննց, Ալի-Ծահուն իննն քյեռուն ասաց. - Ծովու ախչիկ կասի՝ թող Ալի-Ծահին վնղ ուր խրեղեն ծին խեծնի, արևմտոց գյնխ գյն իմ փենշնրի տակ:

Էն մեկէլ օր Ալի-Ծահին խեծավ ծին, կննց ծովու ախչկա փենշնրի տակ, փնթմ էրկու կնաց էկավ, ծին պանցրացավ հնվի մեչ: Ծովու ախչիյն կայներ էր փենջնրեն, համան ուրն իթնլ վեր ծիյուն:

Առեց Ալի-Ծահին ուր կնիյն, էկավ մոտ ուր քյեռին, ուր ախպերներ: Էլնն խեծան ծիյեր. ինգնն ճնմբնխ: Ծատ էկան, քիչ էկան, թուղթ իրիշկացողն թուղթ իրիշկաց, ասաց. - Թակավոր ծովու ավզից շատ նսքնր ժողվե. ինգյե մեր իտև:

Իսոր վերեն Ջնհննմու ծար իրիշկողն մտավ մեյ ծակից գյետնի տակ, փորեց. փորեց, կննց էլավ ինոնց ոտաց տակ, գյետին ճղեց նսքնր-մնսքնր հմեն իճուց խողի տակ: Սորա ետ տառցավ էկավ ուր ինգըրներաց խասավ:

Առին Ալի-Ծահին էկան էլմ ուր տուն, էնտեղ ուրախութեն արին: Ինոնքյ խասան ուրենց մուրազին, մենքյ էլ՝ մեր: